

ՄԱՔՍԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ ՄԱՄՆԱՎՈՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ

ՄԻՋՈՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԸ,

ՁԳՏԵԼՈՎ հեշտացնել միջազգային տուրիզմի զարգացումը,

ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼՈՎ ճանապարհային երթևեկության մասին կոնվենցիայի նպատակները, որը ընդունվել է 1949թ օգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 19-ը ՄԱԿ-ի ավտոմոբիլային և շարժիչային տրանսպորտի կոնֆերանսում և 1949թ. սեպտեմբերի 19-ից Ժնևում բաց է ստորագրման համար,

ՈՐՈՇԵՑԻՆ կնքել Կոնվենցիան և համաձայնեցին ընդունել ներքոնշյալ պայմանները:

ԳԼՈՒԽ I. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Հոդված 1

Սույն Կոնվենցիայում՝

ա) «ներմուծման տուրքեր և հարկեր» տերմինը նշանակում է մաքսային տուրքերը և բոլոր այլ տուրքերը, հարկերը, վճարները և այլ գումարները, որոնք գանձվում են սույն Կոնվենցիայում նշված բեռների ներմուծման համար, բայց բացառում են այն վճարները և գումարները, որոնք սահմանափակված են կատարվող ծառայությունների մոտավոր արժեքի մեծությամբ,

բ) «փոխադրամիջոցներ» տերմինը, եթե համատեքստից այլ բան չի հասկացվում, նշանակում է բոլոր ճանապարհային շարժիչային փոխադրամիջոցները (ներառյալ շարժիչներ ունեցող հեծանիվները) և կցորդները (ներմուծվեն դրանք այդ փոխադրամիջոցների հետ կամ առանձին), ինչպես նաև դրանց պահեստամասերը և սովորական պիտույքներն ու կահավորանքները, երբ դրանք ներմուծվում են համապատասխան փոխադրամիջոցների հետ միասին,

գ) «մասնավոր օգտագործում» տերմինը բացառում է անձանց փոխադրումը պարզևատրումով, վճարով կամ այլ փոխադարձ բավարարվածությամբ և արդյունաբերական կամ առևտրային նպատակներով բեռների փոխադրումը պարզևատրումով կամ առանց դրա,

դ) «ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր» տերմինը ներառում է մաքսային փաստաթուղթը, որը հաստատում է ներմուծման տուրքերի և հարկերի երաշխիքը կամ դեպոզիտը,

ե) «անձինք» տերմինը նշանակում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք,

զ) «տրամադրող միություն» տերմինը նշանակում է ժամանակավոր ներմուծման փաստաթուղթ տալու համար լիազորված միություն,

է) «երաշխավորող միություն» տերմինը նշանակում է միություն, որը Պայմանավորվող կողմի մաքսային մարմինների կողմից լիազորված է որպես երաշխավոր ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր օգտագործող անձանց համար,

ը) «միջազգային կազմակերպություն» տերմինը նշանակում է կազմակերպություն, որի անդամները ազգային միություններ են, որոնք իրավունք ունեն ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր տրամադրել և երաշխիքներ ապահովել դրանց համար,

բ) «Պայմանավորվող կողմեր» տերմինը նշանակում է պետություն կամ տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպություն, որոնք հանդիսանում են սույն Կոնվենցիայի կողմեր,

ժ) «տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպություն» տերմինը նշանակում է կազմակերպություն, որը ստեղծված է սույն Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետում նշված պետությունների կողմից և կազմված է այդ պետություններից, իրավասու է ընդունել իր անդամ պետությունների համար պարտադիր հանդիսացող սեփական օրենսդրությունը սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ և իրավասու է, իր ներքին ընթացակարգերի համաձայն, սույն Կոնվենցիային միանալու մասին որոշումներ կայացնել:

Գ.ԼՈՒԽ II

Առանց ներմուծման տուրքերի և հարկերի վճարման ներմուծում և առանց ներմուծման արգելքների և սահմանափակումների կիրառման ներմուծում

Հոդված 2

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ թույլ է տալիս առանց ներմուծման տուրքերի և հարկերի վճարման, ինչպես նաև առանց ներմուծման արգելքների ու սահմանափակումների կիրառման, դրանց հետադարձ արտահանման և սույն Կոնվենցիայով սահմանվող այլ պայմաններով սովորաբար իր տարածքից դուրս բնակվող անձանց պատկանող այնպիսի փոխադրամիջոցների ժամանակավոր ներմուծում կատարել, որոնք ներմուծվում և մասնավոր կերպով օգտագործվում են իր տարածքից դուրս բնակվող սեփականատերերի կամ այլ անձանց կողմից:

2. Սույն Կոնվենցիայում նշված պահանջների կիրառման դեպքում Պայմանավորվող կողմերը կարող են կարգադրել, որպեսզի այդպիսի փոխադրամիջոցները ունենան ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր, որոնք երաշխավորեն ներմուծման տուրքերի և հարկերի կամ հավասարազոր գումարի վճարումը՝ 27-րդ հոդվածի 4-րդ կետի հատուկ դրույթների կիրառման պայմանով, այն դեպքում, եթե ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր ունեցող փոխադրամիջոցները չեն արտահանվել նշանակված ժամկետներում:

Հոդված 3

Թույլ է տրվում ժամանակավորապես ներմուծվող փոխադրամիջոցների սովորական բաքերում վառելիք ներմուծել՝ առանց ներմուծման տուրքերի և հարկերի վճարման և առանց ներմուծման արգելքների ու սահմանափակումների կիրառման. նկատի ունենալով, որ սովորական է համարվում այն բաքը, որը պատրաստված է համապատասխան տեսակի փոխադրամիջոցներ արտադրող գործարանի կողմից:

Հոդված 4

1. Արդեն իսկ ժամանակավոր ներմուծված որևէ որոշակի փոխադրամիջոցի վերանորոգման պահեստամասերը կարող են ներմուծվել առանց ներմուծման տուրքերի և հարկերի, ինչպես նաև ներմուծման արգելքների ու սահմանափակումների կիրառման: Պայմանավորվող կողմերը կարող են պահանջել, որ այդ մասերի համար ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր կազմվեն:

2. Փոխարինված մասերը, որոնք հետ չեն արտահանվել, ենթակա են ներմուծման տուրքերի և հարկերի վճարման, բացառությամբ այն դեպքերի, երբ շահագրգիռ պետության կանոնների համաձայն, դրանք կարող են առանց որևէ ծախսի հանձնվել գանձապետարան կամ էլ համապատասխան կողմերի հաշվին պաշտոնական հսկողության տակ ոչնչացվել:

Հոդված 5

Ժամանակավոր ներմուծման և միջազգային երթևեկության փաստաթղթերը, որոնք նախատեսվում են այն երկրներում բնակվող անձանց տրամադրելու համար, ուր ներմուծվում են այդ փաստաթղթերը, և որոնք ցանկություն ունեն մուտք գործել այլ երկրներ, և որոնք ուղարկվում են Պայմանավորվող երկրների համապատասխան արտասահմանյան միությունների, միջազգային կազմակերպությունների կամ մաքսային իշխանությունների կողմից լիազորված տուրիստական միություններին, կարող են ներմուծվել առանց ներմուծման տուրքերի և հարկերի վճարման, ինչպես նաև առանց ներմուծման արգելքների և սահմանափակումների կիրառման:

ԳԼՈՒԽ III

Ժամանակավոր ներմուծման համար փաստաթղթերի տրամադրում

Հոդված 6

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր կողմից ընդունված երաշխիքներով և պայմաններով կարող է որևէ միջազգային կազմակերպության մասնաճյուղ հանդիսացող միություններին լիազորել՝ անմիջականորեն կամ թղթակից ասոցիացիների միջոցով տրամադրելու ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր, որոնք նախատեսված են սույն Կոնվենցիայով:

2. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի գործողության ժամկետը կարող է սահմանափակված լինել որևէ մի երկրով կամ մաքսային տարածքով կամ մի քանի երկրներով կամ մաքսային տարածքներով:

3. Այդ փաստաթղթերի գործողության ժամկետը չպետք է գերազանցի մեկ տարին՝ սկսած դրանց տրամադրման օրվանից:

Հոդված 7

1. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը, որոնք գործում են բոլոր կամ մի քանի Պայմանավորվող կողմերի տարածքների համար, պետք է անվանվեն «carnets de passages en douane» (այսուհետ՝ Գրքույկ) և պետք է համապատասխանեն սույն Կոնվենցիայի 1-ին հավելվածում բերված նմուշին:

2. Եթե որևէ Գրքույկ չի գործում մեկ կամ մի քանի տարածքների համար, ապա այն տրամադրող միությունը այդ Գրքույկի կազմի և ներմուծման կտրոնների վրա նշումներ է անում այդ փաստի մասին:

3. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը, որոնք գործում են միայն մի որևէ Պայմանավորվող կողմի տարածքի համար, կարող են կազմվել սույն Կոնվենցիայի 2-րդ հավելվածում

բերված նմուշին համապատասխան: Պայմանավորվող կողմերը կարող են օգտագործել նաև այլ փաստաթղթեր՝ իրենց օրենքների կամ կանոնների համաձայն:

4. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի ժամկետը, բացի 6-րդ հոդվածով նախատեսված լիազորված միությունների կողմից տրվածներից, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ սահմանում է իր օրենքների և կանոնների համաձայն:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ այլ Պայմանավորվող կողմերի հարցումով նրանց է տրամադրում ժամանակավոր ներմուծման այն փաստաթղթերի նմուշները, որոնք գործում են իր տարածքում, բայց չեն համապատասխանում սույն Կոնվենցիայի հավելվածում բերվածին:

ԳԼՈՒԽ IV

Տվյալներ, որոնք նշվում են ժամանակավոր ներմուծման փաստաթղթերում

Հոդված 8

Լիազորված միությունների կողմից տրամադրված ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը կազմվում են այն անձանց անունով, որոնց պատկանում են ժամանակավոր ներմուծվող փոխադրամիջոցները, կամ որոնք տնօրինում են դրանք, կամ դրանք իրենց վերահսկողության տակ են, սակայն եթե տվյալ փոխադրամիջոցը տրված է վարձով, ապա այդ փաստաթղթերը կազմվում են վարձակալի անունով:

Հոդված 9

1. Այն քաշը, որը պետք է հայտարարվի ժամանակավոր ներմուծման փաստաթղթերում, փոխադրամիջոցի նետտո քաշն է: Այն պետք է նշվի մետրական համակարգով: Եթե այդ փաստաթղթերը ուժի մեջ են միայն մի երկրում, այդ երկրի մաքսային մարմինները կարող են սահմանել այլ համակարգի օգտագործում:

2. Արժեքը, որը պետք է հայտարարվի որևէ մի երկրի համար գործող ժամանակավոր ներմուծման փաստաթղթերում, պետք է արտահայտված լինի այդ երկրի տարադրամով: Արժեքը, որը պետք է հայտարարվի Գրքույկում, պետք է արտահայտված լինի տվյալ Գրքույկը տրամադրած երկրի տարադրամով:

3. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերում չի պահանջվում հատուկ նշել փոխադրամիջոցի սովորական պիտույքներ հանդիսացող իրերը և գործիքների արկղը:

4. Եթե մաքսային մարմինները պահանջում են, ապա մասերը (օր.՝ անիվներ, անվաղողեր և անվաղողերի կամերաներ) և փոխադրամիջոցի ոչ սովորական պիտույքներ համարվող իրերը (օր.՝ ռադիո, կցորդ՝ չհայտարարված առանձին փաստաթղթով, կամ բեռնախցեր) պետք է նշվեն ժամանակավոր ներմուծման փաստաթղթերում անհրաժեշտ տեղեկությունների հետ միասին (ինչպես քաշը և արժեքը), և ներկայացվեն այցելած երկրից դուրս գալիս:

Հոդված 10

Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերում այն տրամադրած ասոցիացիայի կողմից նշված յուրաքանչյուր տեղեկություն կարող է փոփոխության ենթարկվել միայն այդ կամ երաշխավորող միության համաձայնությամբ: Այդ փաստաթղթերը ներմուծման երկրի մաքսային մարմինների

ստուգումից հետո չեն կարող որևէ փոփոխության ենթարկվել, բացառությամբ այդ մարմինների համաձայնության դեպքերի:

Հոդված 11

1. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերով ներմուծման թույլատրված փոխադրամիջոցները անձնական օգտագործման համար կարող են օգտագործվել այդ փաստաթղթերի պահառուներից պատշաճ կերպով թույլտվություն ստացած երրորդ անձանց կողմից, պայմանով, որ այդ երրորդ անձինք սովորաբար բնակվելիս լինեն ոչ ներմուծման երկրում և, բացի դրանից, հետևեն սույն Կոնվենցիայով սահմանված այլ պայմաններին: Պայմանավորվող կողմերի մաքսային մարմինները իրավունք ունեն պահանջել այդ անձանցից, որպեսզի ներկայացնեն փաստաթղթերի պահառուի կողմից տրամադրված պատշաճ թույլտվությունը և վերոնշյալ պայմանների կատարման ապացույցը: Եթե այդ ապացույցները բավարար չեն, նշված մաքսային մարմինները կարող են արգելել նշված փաստաթղթերով տվյալ փոխադրամիջոցի օգտագործումը իրենց երկրում: Փոխադրամիջոցները վարձով տրամադրելու դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, եթե չարաշահման կասկած կա, կարող է պահանջել, որպեսզի ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի պահառուն ներկա լինի համապատասխան փոխադրամիջոցի ներմուծման ժամանակ:

2. Չնայած նախորդ կետով սահմանված դրույթներին՝ Պայմանավորվող կողմերի մաքսային մարմինները հատուկ դեպքերում և որոշ նախապայմաններով կարող են իրենց հայեցողությամբ թույլատրել ներմուծման երկրում սովորաբար/մշտապես բնակվող անձին վարել ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի համաձայն օգտագործվող փոխադրամիջոցը, մասնավորապես այն դեպքերում, երբ վարորդը փոխադրամիջոցը վարում է ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի պահառուի անունից կամ նրա ցուցմունքով:

ԳԼՈՒԽ V

Ժամանակավոր ներմուծման պայմանները

Հոդված 12

1. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերում նշված փոխադրամիջոցները այդ փաստաթղթերի ուժի մեջ լինելու ժամանակամիջոցում պետք է հետ արտահանվեն նույն ընդհանուր վիճակում՝ չհաշված նորմալ մաշվածությունը: Վարձով տրամադրված փոխադրամիջոցների դեպքում Պայմանավորվող կողմերի մաքսային մարմինները իրավունք ունեն վարձակալի՝ ժամանակավոր ներմուծման երկիրը լքելիս պահանջել այդ փոխադրամիջոցի հետարտահանումը:

2. Հետարտահանման ապացույց է համարվում ժամանակավոր ներմուծման փաստաթղթերում արտահանման մասին պատշաճ կերպով կատարված նշումը այն երկրի մաքսային մարմինների կողմից, ուր ժամանակավոր ներմուծվել էր փոխադրամիջոցը:

Հոդված 13

1. Չնայած 12-րդ հոդվածով սահմանված հետարտահանման պահանջին՝ չի պահանջվում հետ արտահանել ապացուցված դժբախտ պատահարի հետևանքով խիստ վնասված փոխադրամիջոցները, պայմանով, որ այդ փոխադրամիջոցները՝

ա) վճարվեն ներմուծման տուրքերով և հարկերով, որոնց վճարմանը ենթակա են,

բ) առանց որևէ ծախսի պահման հանձնվեն այն երկրի գանձապետարանին, ուր նրանք ժամանակավոր ներմուծվել են, և այդ դեպքում փաստաթղթերի պահառուն ազատվում է ներմուծման տուրքերի և հարկերի մուծումից, կամ

գ) համապատասխան կողմերի հաշվին ոչնչացվեն պաշտոնական հսկողությամբ, ընդ որում մնացած մասերը և նյութերը, մաքսային մարմինների պահանջի համաձայն, ենթակա են համապատասխան ներմուծման տուրքերի և հարկերի վճարմանը:

2. Եթե ժամանակավոր ներմուծված տրանսպորտային միջոցը չի կարող հետ արտահանվել դրա վրա ոչ մասնավոր անձի կողմից ներկայացված հայցով դրված կալանքի պատճառով, ապա դրա ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի գործողության ժամկետում հետարտահանման պահանջը կարող է այդ կալանքի ընթացքում դադարեցվել:

3. Հնարավոր ամենակարճ ժամկետներում մաքսային մարմինները երաշխավորող միությանը տեղեկացնում են այդ մաքսային մարմինների կողմից կամ նրանց անունից միության կողմից երաշխավորված, ժամանակավոր ներմուծման փաստաթղթերով ներմուծված փոխադրամիջոցի վրա դրված կալանքի և հնարավոր կիրառվելիք միջոցառումների մասին:

4. Եթե փաստաթղթում նշված փոխադրամիջոցը կամ իրը կորել կամ թալանվել է կալանքի ուժի մեջ լինելու և միայն փոխադրամիջոցի կամ այդ իրի՝ պետական իշխանությունների տնօրինության տակ գտնվելու ընթացքում, բացառությամբ մասնավոր անձանց հայցի համաձայն կալանքի դեպքերի, ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի պահառուից, որը մաքսային մարմիններին պետք է ներկայացնի կալանքի ապացույցներ, ներմուծման տուրքեր և հարկեր չեն գանձվում:

Հոդված 14

Որևէ Պայմանավորվող կողմի տարածք ներմուծված փոխադրամիջոցներին չի թույլատրվում կատարել նույնիսկ ոչ կանոնավոր փոխադրումներ այդ տարածքի սահմաններում գտնվող որևէ կետերի միջև վճարման, պարգևատրման կամ որևէ փոխհատուցման դիմաց:

Հոդված 15

Անձինք, որոնք ժամանակավոր ներմուծման արտոնությունների իրավունք ունեն, կարող են ժամանակավոր ներմուծման փաստաթղթի գործողության ժամկետի ընթացքում ներմուծել փոխադրամիջոցներ, որոնց վերաբերվում են այդ փաստաթղթերը, այնքան հաճախ, որքան անհրաժեշտ է, պայմանով, որ յուրաքանչյուր ուղևորություն (մուտք և ելք) հաստատված լինի համապատասխան մաքսային աշխատակցի կողմից կատարվող նշումով, եթե մաքսային մարմինները դա պահանջեն: Տրամադրվող ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի գործողությունը կարող է սահմանափակվել մեկ ուղևորությամբ:

Հոդված 16

Եթե օգտագործում են ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը՝ յուրաքանչյուր ուղևորության համար առանց կտրվող կտրոնների, ապա մաքսային աշխատակիցների կողմից առաջին մուտքի և վերջին ելքի միջև կատարված նշումները ժամանակավոր բնույթ են կրում: Այնուամենայնիվ, եթե վերջին նշումը ելքի մասին ժամանակավոր նշում է, ապա այն ընդունվում է որպես ժամանակավորապես ներմուծված փոխադրամիջոցի կամ պահեստամասերի հետադարձ արտահանման ապացույց:

Հոդված 17

Եթե յուրաքանչյուր ուղևորության համար օգտագործվում է ժամանակավոր ներմուծման կտրվող կտրոններով փաստաթուղթ, ապա յուրաքանչյուր ներմուծում նախատեսում է փաստաթղթի անցումը մաքսատնով, և յուրաքանչյուր հաջորդ արտահանումը համարվում է այդ փաստաթղթի վերջնական մարում, բացի 18-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Հոդված 18

Եթե որևէ երկրի մաքսային մարմինները վերջնականորեն և անվերապահորեն մարել են ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը, նրանք այլևս չեն կարող երաշխիքային միությունից ներմուծման տուրքերի և հարկերի վճարում պահանջել, բացառությամբ այն դեպքի. երբ մարման վկայականը ձեռք է բերվել սխալ կերպով կամ խաբեությամբ:

Հոդված 19

Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի վրա նշումները, որոնք օգտագործվում են սույն Կոնվենցիայով սահմանված պայմաններով, ենթակա չեն մուծումների վճարման մաքսային ծառայության համար այն աշխատանքային ժամերի ընթացքում, որոնք սահմանված են մաքսակետերի համար:

ԳԼՈՒԽ VI

Գործողության ժամկետի երկարացումը և ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի վերականգնումը

Հոդված 20

Ժամանակավոր ներմուծված փոխադրամիջոցների համար սահմանված ժամկետի ընթացքում հետադարձ արտահանման ապացույցի բացակայությունը հաշվի չի առնվի, եթե այդ փոխադրամիջոցները մաքսային մարմիններին ներկայացվեն հետադարձ արտահանման համար փոխադրամիջոցների ժամանակավոր ներմուծման վերջնական ժամկետը լրանալուց հետո տասնչորս օրվա ընթացքում, և ներկայացվեն ուշացման բավարար բացատրություններ:

Հոդված 21

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ընդունում է Գրքույկի գործողության ժամկետի երկարացումը, որը կատարել է մյուս Պայմանավորվող կողմը՝ սույն Կոնվենցիայի 3-րդ հավելվածում նշված գործընթացի համաձայն:

Հոդված 22

1. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի գործողության ժամկետի երկարացման խնդրանքները ներկայացվում են իրավասու մաքսային մարմիններին մինչև այդ փաստաթղթերի գործողության ժամկետի լրանալը, եթե դա անհնարին չի համարվում անհաղթահարելի խոչընդոտի (ֆորս մաժոր) պատճառով: Եթե ժամանակավոր ներմուծման փաստաթուղթը տրամադրվել է լիազորված միության կողմից, ապա երկարացման խնդրանքը պետք է ներկայացվի այդ փաստաթուղթը երաշխավորած միության կողմից:

2. Ժամանակավորապես ներմուծված փոխադրամիջոցների կամ պահեստամասերի հետադարձ արտահանման համար անհրաժեշտ ժամկետի երկարացումը կտրվի, եթե շահագրգիռ անձինք կարողանան մաքսային մարմինների կողմից բավարար համարվող միջոցով հաստատել, որ ֆորս մաժորը խոչընդոտել է նրանց այդ փոխադրամիջոցները կամ պահեստամասերը արտահանել սահմանված ժամկետի ընթացքում:

3. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի գործողության ժամկետը կարող է երկարացվել մեկ անգամ և ոչ ավել, քան մեկ տարով: Այդ ժամանակահատվածից հետո նախորդ Գրքույկի փոխարեն պետք է նոր Գրքույկ տրամադրվի:

Հոդված 23

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, բացառությամբ այն դեպքերի, երբ ժամանակավոր ներմուծման թույլտվության պայմանները այլևս չեն բավարարվում, թույլ է տալիս իր կողմից անհրաժեշտ համարվող ցանկացած վերահսկող միջոցառումների կիրառման պայմանով վերականգնել ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը, որոնք տրամադրվել են լիազորված միությունների կողմից և վերաբերում են իր տարածք ներմուծված փոխադրամիջոցներին կամ պահեստամասերին: Այդպիսի վերականգնման խնդրանքները ներկայացվում են երաշխավորող միության կողմից:

ԳԼՈՒԽ VII

Չմարված ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի կարգավորման կարգը

Հոդված 24

1. Եթե ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը պատշաճ ձևով չեն մարվել, ներմուծման երկրի մաքսային մարմինները (անկախ այն հանգամանքից՝ այդ փաստաթղթերի գործողության ժամկետը անցել է, թե ոչ) որպես այդ փոխադրամիջոցի կամ պահեստամասերի հետարտահանման մասին ապացույց են ընդունում պաշտոնական մարմնի (հյուպատոս, մաքսատուն, ոստիկանություն, քաղաքապետ, դատական պաշտոնյա և այլն) կողմից տրված վկայականը՝ կազմված սույն Կոնվենցիայի կից 4-րդ հավելվածում բերված նմուշի հիման վրա, որը հաստատում է այն փաստը, որ

այդ փոխադրամիջոցը կամ պահեստամասերը, որոնց մասին է խոսքը, ներկայացվել են նրան և գտնվում են ներմուծման երկրից դուրս: Որպես այլընտրանք, նրանք կարող են ընդունել այլ գրավոր փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ փոխադրամիջոցը կամ պահեստամասերը գտնվում են ներմուծման երկրից դուրս: “Carnet de passage en douane” գրքույկից բացի այլ փաստաթղթեր, որոնք դեռևս գտնվում են ուժի մեջ, ներկայացվում են վերոնշյալ ապացույցների հետ միաժամանակ: Գրքույկի օգտագործման դեպքում մաքսային մարմինները որպես փոխադրամիջոցի կամ պահեստամասերի հետ արտահանման ապացույց են ընդունում հետագայում այցելած երկրների մաքսային մարմինների կողմից գրքույկի վրա կատարած նշումները (վիզաները):

2. Որևէ փոխադրամիջոցի կամ պահեստամասի վերաբերող, պատշաճ ձևով չմարված ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի ոչնչացման, կորստի կամ հափշտակման դեպքում ներմուծման երկրի մաքսային մարմինները որպես հետարտահանման ապացույց են ընդունում պաշտոնական մարմնի (հյուպատոս, մաքսատուն, ոստիկանություն, քաղաքապետ, դատական պաշտոնյա և այլն) կողմից տրված վկայականը՝ կազմված սույն Կոնվենցիային կից 4-րդ հավելվածում բերված մնուշի հիման վրա, որը հաստատում է, որ այդ փոխադրամիջոցը կամ պահեստամասերը, որոնց մասին է խոսքը, ներկայացվել են իրեն և գտնվում են ներմուծման երկրի տարածքից դուրս՝ այդ փաստաթղթերի ուժի մեջ գտնվելու ժամկետը լրանալուց հետո: Որպես այլընտրանք նրանք կարող են ընդունել ցանկացած այլ գրավոր ապացույցներ, որոնք հաստատում են, որ փոխադրամիջոցը կամ պահեստամասերը գտնվում են ներմուծման երկրից դուրս:

3. Փոխադրամիջոցի կամ նրան վերաբերվող պահեստամասերի՝ Պայմանավորվող կողմերից որևէ մեկի տարածքում գտնվելու ժամանակ Գրքույկի ոչնչացման, կորստի կամ հափշտակման դեպքում տվյալ Կողմի մաքսային մարմինները, շահագրգիռ միության խնդրանքով, ընդունում են գրքույկը փոխարինող փաստաթուղթ, որը դադարում է գործել այդ գրքույկի ուժի մեջ լինելու ժամկետը լրանալու օրը: Այդ փաստաթղթի ընդունումը անվավեր է դարձնում ոչնչացված, կորսված, հափշտակված Գրքույկի ընդունումը: Մաքսային մարմինների և այն տրամադրած միության կողմից Գրքույկը անվավեր ճանաչելուց հետո այն սխալ օգտագործելու դեպքում միությունը պատասխանատվություն չի կրում համապատասխան տուրքերի և հարկերի վճարման համար: Եթե փոխարինող փաստաթղթի փոխարեն փոխադրամիջոցի կամ պահեստամասերի հետ արտահանման համար թույլտվություն է տրվել կամ նմանատիպ փաստաթուղթ, ապա այդ թույլտվության կամ փաստաթղթի վրա դրված արտահանման մասին նշումը (վիզան) հետարտահանման բավարար ապացույց է:

4. Եթե փոխադրամիջոցը հափշտակվել է ժամանակավոր ներմուծման երկրից հետարտահանումից հետո, ընդ որում հետարտահանումը համապատասխան ձևով չի ձևակերպվել ժամանակավոր ներմուծման փաստաթղթերում, և այդ փաստաթղթերում բացակայում է այցելած երկրի մաքսային մարմինների կողմից դրվող մուտքի վիզան, ապա այդ փաստաթղթերը, այնուամենայնիվ, կարող են կարգավորվել, եթե երաշխավորող միությունը ներկայացնի այդ փաստաթղթերը հափշտակման մասին այնպիսի ապացույցների հետ միասին, որոնք կհամարվեն բավարար: Եթե ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի ժամկետը դեռևս չի լրացել, մաքսային մարմինները կարող են պահանջել հանձնել դրանք:

Հոդված 25

24-րդ հոդվածում նշված դեպքերում մաքսային մարմինները իրավունք ունեն կարգավորման համար վճարներ գանձել:

Հոդված 25-բիս

Իրավասու մաքսային մարմինները չպետք է ներմուծման տուրքերի և հարկերի վճարում պահանջեն, եթե նրանց ապացույց է ներկայացվել, որ ժամանակավոր ներմուծման փոստաթղթերով ներմուծված փոխադրամիջոցը չի կարող հետ արտահանվել, քանի որ այն ֆորս մատրիի հետևանքով ոչնչացվել կամ անվերադարձ կորսվել է:

Հոդված 26

Մաքսային մարմինները իրավունք չունեն ժամանակավոր ներմուծված փոխադրամիջոցի կամ պահեստամասերի համար երաշխավորող միությունից ներմուծման տուրքերի և հարկերի վճարում պահանջել, եթե այդ երաշխավորող միությունը չի տեղեկացվել այդ փաստաթղթերի գործողության ժամկետի լրացումից հետո մեկ տարվա ընթացքում ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի չմարման մասին: Մաքսային մարմինները երաշխավորող միություններին չվճարման մասին ծանուցումից հետո մեկ տարվա ընթացքում մանրամասն տեղեկություններ են հաղորդում ներմուծման տուրքերի և հարկերի չափի վերաբերյալ: Երաշխավորող միության պատասխանատվությունը այդ գումարների համար դադարեցվում է, եթե մեկ տարվա ընթացքում նման տեղեկություններ չեն հաղորդվում:

Հոդված 27

1. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի չմարման վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո երաշխավորող միությունը կարող է մեկ տարվա ընթացքում խնդրո առարկա փոխադրամիջոցի կամ պահեստամասերի հետարտահանման մասին ապացույցներ ներկայացնել՝ պահպանելով սույն Կոնվենցիայով սահմանված պայմանները: Սակայն այդ ժամանակահատվածը կարող է սկսվել միայն ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի գործողության ժամկետը լրանալուց հետո: Եթե մաքսային մարմինները վիճարկում են ներկայացված ապացույցների վավերականությունը, ապա նրանք պետք է մեկ տարուց ոչ ուշ ժամանակահատվածում երաշխավորող մարմնին տեղյակ պահեն այդ մասին:

2. Եթե սահմանված ժամանակահատվածում այդ ապացույցները չեն ներկայացվում, երաշխավորող միությունը երեք ամսվա ընթացքում դեպոզիտ է դնում կամ նախօրոք մուծում է ներմուծման համապատասխան հարկերը և տուրքերը: Այդ դեպոզիտը կամ մուծումը վերջնական են դառնում դեպոզիտի կամ նախնական գումարի մուծումից մեկ տարի հետո: Այս վերջին ժամանակահատվածի ընթացքում երաշխավորող միությունը դեպոզիտի կամ մուծված գումարի հետվերադարձման համար դեռևս կարող է օգտվել նախորդ կետով սահմանված հնարավորությունից:

3. Ներմուծման հարկերի համար դեպոզիտ կամ նախնական մուծման մասին կանոններ չնախատեսող երկրների համար նախորդ կետով սահմանված դրույթների համաձայն իրականացված

մուծումը համարվում է վերջնական, բայց պետք է նկատի ունենալ, որ մուծված գումարները կարող են փոխհատուցվել սույն հոդվածով սահմանված պայմանների պահպանման դեպքում:

4. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի չմարման դեպքում երաշխավորող միությունը պարտավոր չէ ներմուծման տուրքերի և հարկերի ընդհանուր գումարը գերազանցող գումար մուծել տոկոսների հետ միասին, որը վերաբերում է այն փոխադրամիջոցներին կամ պահեստամասերին, որոնք հետ չեն արտահանվել, եթե այդպիսիք նախատեսված են:

Հոդված 28

Խաբեության, խախտման կամ չարաշահման դեպքերում Պայմանավորվող կողմերը, չնայած սույն Կոնվենցիայով սահմանված դրույթներին, կարող են ներմուծման հարկերը և տուրքերը գանձելու նպատակով ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը օգտագործող անձանց դեմ միջոցառումներ ձեռնարկել, ինչպես նաև կարող են այդ անձանց հանդեպ ցանկացած պատժամիջոց կիրառել: Այդ դեպքերում երաշխավորող միությունը աջակցում է մաքսային մարմիններին:

Գ.ԼՈՒԽ VIII

Այլ դրույթներ

Հոդված 29

Պայմանավորվող կողմերը միջոցներ են ձեռնարկում՝ չնույնիսկ այնպիսի մաքսային կանոններ, որոնք կարող են խոչընդոտել միջազգային տուրիզմի զարգացումը:

Հոդված 30

Մաքսային ընթացակարգերը արագացնելու համար սահմանակից Պայմանավորվող կողմերը միջոցներ են ձեռնարկում, որպեսզի իրենց մաքսակետերը միմյանց մոտիկ տեղակայված լինեն և բաց լինեն օրվա միևնույն ժամերին:

Հոդված 31

Սույն Կոնվենցիայի դրույթների ցանկացած խախտում, ցանկացած փոխարինում, սխալ տեղեկությունների հաղորդում կամ որևէ գործողություն, որոնց հետևանքով որևէ անձ կամ իր սխալ կերպով սույն Կոնվենցիայով հաստատված ներմուծման համակարգից բխող առավելություններ է ստանում, կարող է խախտում կատարողի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու հիմք ծառայել այն երկրի օրենքների համաձայն, որտեղ այդ խախտումը կատարվել է:

Հոդված 32

Ոչինչ սույն Կոնվենցիայում չի խոչընդոտում մաքսային կամ տնտեսական միություն ձևավորած Պայմանավորվող կողմերին հատուկ դրույթներ կիրառել այն անձանց նկատմամբ, որոնք բնակվում են այդպիսի միություն կազմած երկրներում:

Հոդված 32 բիս

Սույն Կոնվենցիան չի խոչընդոտում ավելի լայն արտոնությունների կիրառումը, որոնք Պայմանավորվող կողմերը տրամադրում են կամ կարող են ցանկանալ տրամադրել միակողմանի դրույթների հիման վրա և կամ երկկողմանի կամ բազմակողմանի համաձայնագրերի հիման վրա, պայմանով, որ այդ արտոնությունները չխոչընդոտեն սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը: Պայմանավորվող կողմերին խորհուրդ է տրվում հրաժարվել ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր և երաշխիքներ ներկայացնելու պահանջից:

ԳԼՈՒԽ IX

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 33

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար մինչև 1954թ. դեկտեմբերի 31-ը ՄԱԿ-ի անդամ ցանկացած պետության և ցանկացած այլ պետության համար, որը հրավիրվել է մասնակցելու ՄԱԿ-ի Մասնավոր ճանապարհային շարժիչային փոխադրամիջոցների ժամանակավոր ներմուծման և զբոսաշրջիկների վերաբերյալ մաքսային ձևակերպումների կոնֆերանսին, որը տեղի է ունեցել 1954թ. մայիսին և հունիսին Նյու Յորքում, և որը հետագա տեքստում կանվանվի «Կոնֆերանս»:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, վավերացման փաստաթղթերը հանձնվում են ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 34

1. 1995թ. հունվարի 1-ից սույն Կոնվենցիան բաց է 33-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված ցանկացած պետության կամ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից համապատասխան հրավեր ստացած ցանկացած այլ պետության միանալու համար: Այն բաց է միանալու համար նաև խնամակալության տակ գտնվող ցանկացած տարածքի անունից, որի համար ՄԱԿ-ը ղեկավարող մարմին է հանդիսանում:

1-բիս. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն, սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ կարող է դառնալ տնտեսական ինտեգրման ցանկացած տարածաշրջանային կազմակերպություն: Այդպիսի կազմակերպությունը, որը միանում է սույն Կոնվենցիային, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին տեղեկացնում է սույն Կոնվենցիայով կանոնակարգվող հարցերի նկատմամբ իր իրավասության և դրանց հետագա ցանկացած փոփոխությունների մասին: Այդ կազմակերպությունը և նրա անդամ-պետությունները, այնուամենայնիվ, կարող են, առանց սույն Կոնվենցիայով սահմանված որևէ պարտավորությունից շեղվելու, որոշել իրենց պատասխանատվության շրջանակները սույն Կոնվենցիայով իրենց պարտավորությունների իրականացման վերաբերյալ:

2. Միացումը կատարվում է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին միացման մասին փաստաթղթի հանձնմամբ:

Հոդված 35

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում տասնհինգերորդ վավերացման փաստաթուղթը, առանց վերապահումների կամ 39-րդ հոդվածի համաձայն ընդունված վերապահումներով միացման փաստաթուղթը ի պահ հանձնելու օրվանից սկսած իննսուներորդ օրը:

2. Յուրաքանչյուր պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության համար, որոնք կվավերացնեն սույն Կոնվենցիան կամ կմիանան նրան տասնհինգերորդ վավերացման փաստաթղթի կամ նախորդ կետի համաձայն միացման փաստաթղթի հանձնումից հետո, սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդպիսի պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության կողմից իր վավերացման փաստաթուղթը կամ առանց վերապահումների կամ 39-րդ հոդվածի համաձայն ընդունված վերապահումներով միացման փաստաթուղթը ի պահ հանձնելու օրվանից սկսած իննսուներորդ օրը:

Հոդված 36

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ լինելու երեք տարին լրանալուց հետո ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է չեղյալ համարել այն՝ այդ մասին տեղեկացնելով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին:

2. Չեղյալ համարումը ուժի մեջ է մտնում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի կողմից չեղյալ համարելու մասին ծանուցումը ստանալու օրվանից սկսած տասնհինգ ամիս հետո:

Հոդված 37

Սույն Կոնվենցիան կորցնում է իր ուժը, եթե այն ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած տասներկու իրար հաջորդող ամիսների ժամանակահատվածում Պայմանավորվող կողմերի քանակը ութից պակաս է:

Հոդված 38

1. Ցանկացած պետություն կարող է իր վավերացման փաստաթուղթը կամ միացման փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո ցանկացած ժամանակ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով հայտարարել, որ սույն Կոնվենցիան տարածվում է բոլոր այն տարածքների կամ որևէ տարածքի վրա, որի միջազգային հարաբերությունների համար այն պատասխանատու է: Սույն Կոնվենցիան տարածվում է նշված ծանուցման մեջ հիշատակված տարածքների վրա Գլխավոր քարտուղարի կողմից այդ ծանուցումը ստանալու օրվանից սկսած իննսուներորդ օրը, եթե այն չի ուղեկցվում վերապահմամբ, կամ ծանուցման ուժի մեջ մտնելու օրվանից սկսած իննսուներորդ օրը, համաձայն 39-րդ հոդվածի, կամ այն օրը, երբ սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում համապատասխան պետության համար՝ կախված այն հանգամանքից, թե վերոնշյալ օրերից որն է ավելի ուշ գալիս:

2. Ցանկացած պետություն, որը, նախորդ կետի համաձայն, հայտարարություն է արել սույն Կոնվենցիայի՝ որևէ տարածքի վրա գործելու վերաբերյալ, որի միջազգային հարաբերությունների համար նա պատասխանատու է, կարող է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան առանձին այդ տարածքի համար, համաձայն 36-րդ հոդվածի դրույթների:

Հոդված 39

1. Սույն Կոնվենցիայի նկատմամբ վերապահումները, որոնք կատարվում են Եզրափակիչ ակտի ստորագրումից առաջ, համարվում են ընդունված, եթե դրանք ընդունվում են Կոնֆերանսի մասնակիցների մեծամասնության կողմից և ներառվում են Եզրափակիչ ակտի մեջ:

2. Եզրափակիչ ակտը ստորագրելուց հետո կատարված վերապահումները ընդունված չեն համարվում, եթե սույն Կոնվենցիան ստորագրած պետությունների կամ Պայմանավորվող կողմերի մեկ երրորդը առարկություն է հայտնում, ինչպես որ նախատեսված է:

3. Որևէ պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության կողմից ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին ստորագրման, վավերացման կամ միանալու մասին փաստաթղթի հանձնման, կամ 38-րդ հոդվածի համաձայն ցանկացած ծանուցման ժամանակ ներկայացված ցանկացած վերապահման տեքստ Գլխավոր քարտուղարը շրջաբերական նամակով ուղարկում է բոլոր Պայմանավորվող կողմերին, որոնք տվյալ պահին սույն Կոնվենցիան ստորագրած, վավերացրած կամ միացած են: Եթե այդ Պայմանավորվող կողմերի մեկ երրորդը առարկություն հայտնի շրջաբերական նամակի ուղարկման օրվանից սկսած իննսուն օրվա ընթացքում, ապա այդ վերապահումը ընդունված չի համարվի: Գլխավոր քարտուղարը տեղեկացնում է սույն կետում հիշատակված բոլոր Պայմանավորվող կողմերին իր կողմից ստացված ցանկացած առարկության մասին, ինչպես նաև այդ վերապահման ընդունման կամ մերժման մասին:

4. Այն պետության կողմից ներկայացվող առարկությունը, որը ստորագրել, բայց չի վավերացրել սույն Կոնվենցիան, կորցնում է իր ուժը, եթե առարկության օրվանից սկսած իննամսյա ժամանակահատվածում առարկություն ներկայացրած պետությունը չի վավերացնում սույն Կոնվենցիան: Եթե որևէ առարկության ուժը կորցնելու հետևանքով որևէ վերապահում ընդունվում է նախորդ կետի հիման վրա, ապա Գլխավոր քարտուղարը այդ մասին տեղեկացնում է նշված կետում հիշատակված Պայմանավորվող կողմերին: Սույն Կոնվենցիան ստորագրած ոչ մի պետության չի ուղարկվում որևէ վերապահման տեքստ նախորդ կետի համաձայն, եթե այդ պետությունը չի վավերացրել սույն Կոնվենցիան՝ իր անունից այդ Կոնվենցիայի ստորագրման պահից սկսած երեք տարվա ընթացքում:

5. Վերապահում ներկայացնող Պայմանավորվող կողմը կարող է տասներկուամսյա ժամանակահատվածում, որը սկսվում է 3-րդ կետում հիշատակված՝ Գլխավոր քարտուղարի կողմից այդ վերապահման մերժման մասին ծանուցման ուղարկման օրվանից՝ նշված կետով նախատեսված կարգով, հրաժարվել այդ վերապահումից, և այդ դեպքում 38-րդ հոդվածի համաձայն վավերացման, միացման փաստաթուղթը կամ ծանուցումը, կախված այն բանից, թե որն է կիրառվում, ուժի մեջ է մտնում տվյալ Պայմանավորվող կողմի համար այդ մերժման օրվանից սկսած: Մինչև այդ մերժումը վերոնշյալ փաստաթուղթը կամ ծանուցումը, կախված այն բանից, թե որն է կիրառվում, ուժ չունի, եթե միայն տվյալ վերապահումը հետագայում չի ընդունվել 4-րդ կետի հիման վրա:

6. Սույն հոդվածով ընդունված վերապահումները կարելի է ցանկացած ժամանակ հանել Գլխավոր քարտուղարին տեղեկացնելու միջոցով:

7. Որևէ Պայմանավորվող կողմ պարտավոր չէ տարածել վերապահում արած որևէ Պայմանավորվող կողմի վրա այն որոշումներից բխող արտոնությունները, որոնց վերաբերում է այդպիսի վերապահումը: Այդ իրավունքից օգտվող ցանկացած Պայմանավորվող կողմ տեղեկացնում է

այդ մասին Գլխավոր քարտուղարին, իսկ վերջինս այդ որոշման մասին հայտնում է սույն Կոնվենցիան ստորագրած բոլոր պետություններին և Պայմանավորվող կողմերին:

Հոդված 40

1. Երկու կամ մի քանի Պայմանավորվող կողմերի միջև ցանկացած վեճ՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման հետ, հնարավորության սահմաններում լուծվում է նրանց միջև բանակցությունների միջոցով:

2. Բանակցությունների միջոցով չլուծված ցանկացած վեճ փոխանցվում է արբիտրաժ, եթե դա պահանջում է այդ վեճին մասնակից որևէ Պայմանավորվող կողմ, և համապատասխանաբար փոխանցվում է մեկ կամ մի քանի արբիտրներին, որոնք ընտրվում են վեճին մասնակից Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ: Եթե արբիտրաժին փոխանցելու պահանջի օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում վեճին մասնակից Պայմանավորվող կողմերը չկարողանան պայմանավորվել արբիտրի կամ արբիտրների ընտրության հարցում, այդ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է խնդրել Սիջազգային դատարանի նախագահին նշանակել միանձնյա արբիտր, որին և տվյալ վեճը կփոխանցվի լուծման համար:

3. Նախորդ կետի համաձայն նշանակված արբիտրի կամ արբիտրների որոշումը պարտադիր է համապատասխան Պայմանավորվող կողմերի համար:

Հոդված 41

1. Սույն Կոնվենցիան երեք տարի ուժի մեջ լինելուց հետո ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին ծանուցում ուղարկելու միջոցով պահանջել կոնֆերանս գումարել՝ սույն Կոնվենցիան վերանայելու համար: Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին ծանուցում է ուղարկում այդ պահանջի մասին, և սույն Կոնվենցիայի վերանայման կոնֆերանսը գումարվում է Գլխավոր քարտուղարի կողմից, եթե Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցում ուղարկելու օրվանից հետո չորս ամսվա ընթացքում Պայմանավորվող կողմերի առնվազն կեսը կհայտնի նրան, որ իրենք ընդունում են այդ պահանջը:

2. Եթե նախորդ կետի համաձայն կոնֆերանս է գումարվում, ապա Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին տեղեկացնում է այդ մասին և հրավիրում նրանց եռամսյա ժամկետում ներկայացնել այնպիսի առաջարկություններ, ինչպիսիք նրանք ցանկանում են քննարկել այդ կոնֆերանսի ընթացքում: Գլխավոր քարտուղարը կոնֆերանսի նախնական օրակարգը առաջարկությունների տեքստի հետ միասին ուղարկում է բոլոր Պայմանավորվող կողմերին կոնֆերանսի բացումից առնվազն երեք ամիս առաջ:

3. Սույն հոդվածի համաձայն գումարվելիք ցանկացած կոնֆերանսին Գլխավոր քարտուղարը հրավիրում է բոլոր Պայմանավորվող կողմերին և ՄԱԿ-ի բոլոր այլ անդամ պետություններին, ինչպես նաև յուրաքանչյուր մասնագիտացված ձեռնարկության:

Հոդված 42

1. Ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է առաջարկել սույն Կոնվենցիայի մեկ կամ մի քանի ուղղում: Առաջարկվող ցանկացած փոփոխության տեքստը ուղարկվում է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին, որը այն ուղարկում է բոլոր Պայմանավորվող կողմերին:

2. Ցանկացած առաջարկվող փոփոխություն, որը ուղարկվում է նախորդ կետի համաձայն, համարվում է ընդունված, եթե ոչ մի Պայմանավորվող կողմ այդ առաջարկվող փոփոխությունների ուղարկման օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում առարկություն չի ներկայացնում Գլխավոր քարտուղարին: Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունները, որոնք հանդիսանում են սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմեր, իրականացնում են առարկություններ ներկայացնելու իրենց իրավունքը այն հարցերի նկատմամբ, որոնք իրենց իրավասության շրջանակներում են: Այդ դեպքում նշված կազմակերպությունների անդամ պետությունները, որոնք հանդիսանում են Պայմանավորվող կողմեր, իրավունք չունեն նման իրավունք իրականացնել անհատական կարգով:

3. Գլխավոր քարտուղարը հնարավոր կարճ ժամկետում տեղեկացնում է բոլոր Պայմանավորվող կողմերին առաջարկված փոփոխության նկատմամբ արված առարկության մասին, և եթե ոչ մի առարկություն չի արվում, փոփոխությունը բոլոր Պայմանավորվող կողմերի համար ուժի մեջ է մտնում երեք ամիս հետո՝ նախորդ կետում հիշատակված վեցամսյա ժամկետը լրանալուն պես:

Հոդված 43

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին և ՄԱԿ-ի բոլոր անդամ պետություններին տեղեկացնում է ներքոնշյալի մասին.

ա) 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն կատարված ստորագրման, վավերացումների և միացումների մասին,

ա-բիս) տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների իրավասության մասին և նրա բոլոր հետագա փոփոխությունների մասին, համաձայն 34-րդ հոդվածի 1-բիս կետի,

բ) 35-րդ հոդվածի համաձայն՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա մասին,

գ) 36-րդ հոդվածի համաձայն՝ ստացված չեղյալ հայտարարելու մասին,

դ) 37-րդ հոդվածի համաձայն՝ սույն Կոնվենցիայի ուժը կորցնելու մասին,

ե) 38-րդ հոդվածի համաձայն՝ ստացված ծանուցումների մասին,

զ) 42-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած փոփոխության ուժի մեջ մտնելու մասին:

Հոդված 44

Սույն Կոնվենցիայի բնօրինակը պահպանման է հանձնվում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին, որը դրա վավերացված օրինակները ուղարկում է բոլոր Պայմանավորվող կողմերին և ՄԱԿ-ի բոլոր անդամ պետություններին:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Նյու Յորքում հազար ինը հարյուր հիսունչորս թվականի հունիսի չորսին մեկական օրինակ անգլերեն, իսպաներեն և ֆրանսերեն, ընդ որում դրանցից յուրաքանչյուրը հավասարազոր է:

Գլխավոր քարտուղարին հանձնարարվում է պատրաստել սույն Կոնվենցիայի պաշտոնական թարգմանությունը չինարեն և ռուսերեն, և չինարեն ու ռուսերեն տեքստերը կցել անգլերեն, իսպաներեն և ֆրանսերեն տեքստերին, երբ նա դրանց վավերացված օրինակները ուղարկի պետություններին՝ համաձայն սույն Կոնվենցիայի 44-րդ հոդվածի: